Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

82/4178/ 3 մայիսի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224

Ա

## Մարիի ձայնը

Երեկ ես ստացա իմ՝ «հարգելի ընտրողիս» ծանուցումը, որտեղ գրված է իմ հասցեն՝ «Կոտայք, Զովունի 5 փ. 110», ինչպես նաեւ իմ քվեարկելու վայրը: Բայց բացի իմ ծանուցումից (թիվ 739206)՝ եկել է մեկ այլ ծանուցում (739207)՝ Մարի Գեւորգյան Վրեժի անունով, որին ես պատիվ չունեմ ճանաչելու: Շուրջ 5 տարի իմ տան միակ սեփականատերը լինելով՝ հավատացնում եմ ձեզ, որ իմ տանը ոչ մի Մարի չի բնակվում եւ գրանցված չի: Հետաքրքիր է, ինչպե՞ս է նա հայտնվել ընտրողների ցուցակում:

Երեք շաբաթ քաղաքական ուժերը եւ ոստիկանությունը հավատացնում են մեզ, որ գնում են տնետուն, ստուգում են եւ մաքրում ցուցակները: Իրականում գնալով համոզվում եմ, որ նրանք բոլորը ծույլիկ են եւ ուժեղ են միայն խոսակցական ժանրում: Գուցե նրանք հույսները դրել են քաղաքացինրի՞ վրա, որոնք ոչ միայն կփնտրեն իրենց անունը համապատասխան ցուցակում՝ համոզվելու համար, որ իրենք կան ընտրացուցակում, այլեւ կուսումնասիրեն, թե ովքեր են գրանցված իրենց հասցեում: Բայց չէ՞ որ դա ոչ թե քաղաքացիների շահախնդրությունն է, այլ քաղաքական ուժերի կամ «արդար ընտրություններ» խոստացող իշխանությունների, մասնավորապես՝ ոստիկանության:

Իսկ կուսակցությունները պիտի ոչ թե խոսեն, թե ինչպես է իշխանությունը կեղծելու ընտրությունները, եւ ինչպես են իրենք կռվից հետո բռունցքներ թափահարելու (հետընտրական գործընթացներ, հանրահավաքներ եւ այլն), այլ պիտի գործեին՝ հնարավոր կեղծիքները կանխելու համար: Իշխանությունն էլ՝ ՀՀԿ-ն (որովհետեւ մնացած կոալիցիոն կուսակցությունները «վիզ չեն առնում», որ իրենք իշխանություն են) պիտի ոչ թե երդվեր, թե ընտրությունները կլինեն արդար ու թափանցիկ, այլ բարձրացներ ընտրողների հավատը այդ թափանցիկության նկատմամբ: Ենթադրում եմ, որ նման ծանուցագրեր միայն ես չէ, որ ստանում եմ:

8 քաղաքական ուժ երեք շաբաթ՝, օրը մի քանի անգամ նույն բաներն էին ասում՝ արտագաղթ, կոռուպցիա, ստվերային տնտեսություն, անդունդի եզր եւ այլն: Այն էներգիան, որը նրանք ծախսում էին հանրահայտ բաները արձանագրելու համար, կարելի էր ուղղել ավելի կառուցողական հունով եւ կազմակերպել այն մարդկանց, որոնք իսկապես արդար ընտրություններ են ուզում: Իմ կարծիքով՝ ի դեպ, նման մարդիկ Հայաստանում փոքրամասնություն են կազմում, բայց դա ակտիվ, որակյալ փոքրամասնություն է, որին հնարավոր էր առանց գոռալու եւ որեւէ մեկին վիրավորելու դրդել օգտակար գործերի: Օրինակ՝ ցուցակները տուն առ տուն իրականում ստուգելու: Քանի որ առջեւում նախագահական ընտրություններ են, եւ քաղաքական ուժերից եւ, բնականաբար, նաեւ՝ ոստիկանությունից առանձնապես հույս չկա, որ նրանք նպաստելու են ցուցակների «մաքրմանը», լավ կլինի, որ որեւէ հասարակական խումբ, որը մեր երիտասարդ բնապահպանների նման ներգրավված չէ քաղաքականության մեջ, մոտակա մեկ տարում ձեռնարկեր այդ գործը:

Իսկ թե ում օգտին է «քվեարկելու» իմ տանը «բնակվող» Մարին՝ ես չեմ կասկածում:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Որ Արարատ 73-ի մայկա-տռուսիկը հագնեք, մեկ է՝ Իշտոյան չեք դառնա»



«Հանրապետություն» կուսակցության առաջնորդ Արամ Սարգսյանը Գյումրիում կայացած ՀԱԿ հանրահավաքի ժամանակ իր զարմանքը հայտնեց պատգամավորների թեկնածուների ցուցապաստառներից: «Ժողովուրդ ջան, առաջին բանը որ մտա Գյումրի, ինձ զարմացրեց էս նկարների շքահանդեսը, ասես Կաննի Ֆեստիվալ լինի, նկարները փռել են՝ մեկը մեկից մեծ: Իրենց նախկին շեֆ Ռոբերտ Քոչարյանը մտածում էր, որ էս երկրի ամենաուժեղ տղեն, միակ տղամարդը նա ա, ով ամենաշատ ախրանիկներ ունի: Էդ սկզբունքով էր գնում, ուր որ գնում էր՝ ժամերով չէր վերջանում նրա թիկնազորը, էս տղերքն էլ՝ նկարները դնողները, իրա երեխեքն են, իրանց թվում ա, որ կոստյում, փողկապ հագան, մեծ նկար կպցրին, ինչքան նկարը մեծ՝ էնքան քվեն շատ, էնքան ինքը լավ տղա: Չէ, տղերք ջան, էդ էդպես չէ. որ Արարատ 73-ի մայկա-տռուսիկը հագնեք, Իշտոյան չեք դառնա, դրանով չի փոխվում, ախր, էնքան պարզ ու պրիմիտիվ ա»,- ժողովրդի հետ իր տպավորությունները կիսեց Արամ Սարգսյանը:

Կարդացեք նաեւ՝ էջ 3:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Կպատասխանեն հետագայում՝ ընտրություններից հետո

Նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը ՀԱԿ-ի քարոզարշավների ժամանակ մարզերի բնակիչներին խորհուրդ էր տալիս՝ «երբ Սերժը գա՝ կոշիկի թայը հանեք, շպրտեք վրան»: Բացի այդ, այս օրերին Կոնգրեսի կողմից հնչել են բավականին կոշտ մեղադրանքներ ՀՀԿ-ի հասցեին, որոնց իշխող կուսակցությունը չի արձագանքել: Aravot.am-ի հետ զրույցում ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանն այս առնչությամբ ասաց, որ իրենք գրանցում են այդ բոլորը եւ նրանց կպատասխանեն հետագայում՝ ընտրություններից հետո. «Բագրատյանը 88-90 թվականներին կոշիկ չուներ հագնելու, սանդալներով ձմռանը ՀՀՇ-ի շտաբի կողքը ման էր գալիս: Այնպես որ, կոշիկի գաղափարախոսությամբ է եկել, դրա համար կոշիկից էլ խոսում է: Ինքը մի հատ չարոխատիպ կոշիկ էր հագնում, որ մոդա չէր, ամառձմեռ դա էր հագնում, ձմեռը՝ մի քանի զույգ նասկիով»:

Կարդացեք նաեւ՝ էջ 3:

### «ՀՅԴ-ի ծրագրային դրույթները ոչ ոք չկարողացավ վիճարկել»

«Ավարտվում է 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք ԱԺ ընտրությունների քարոզարշավը: Կարող ենք արձանագրել, որ ՀՅ Դաշնակցության նախընտրական ծրագիրը այդպես էլ չունեցավ հավասարազոր մրցակից: Կառուցված լինելով 4 հենասյուների վրա՝ մեր ծրագրի իրագործումը կապահովի արդար եւ բարեկեցիկ պետության կայացում»,- երեկ հանրահավաքում հայտարարեց ՀՅԴ խորհրդարանական խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանը: Նա անդրադարձավ բացառապես ՀՅԴ-ի սոցիալական եւ տնտեսական արդարության հաստատմանն առնչվող ծրագրային դրույթներին, որոնք, նրա ասելով, «այդպես էլ ոչ ոք չկարողացավ վիճարկել»:

Հանրահավաքի մասին՝ էջ 2:

### ՀԱԿ-ի թեկնածուին ծեծողի նկատմամբ քրգործ է հարուցվել

Փոխոստիկանապետ Հունան Պողոսյանը երեկ ասաց, որ ոստիկանությունը ՀԱԿ պատգամավորի թեկնածու Գայանե Առուստամյանի հաղորդման հիման վրա քրեական գործ է հարուցել: «Առողջությանը թեթեւ մարմնական վնասվածք պատճառելու հատկանիշներով գործը ուղարկվել է նախաքննության: Տիկին Առուստամյանին, այսպես ասած, ծեծի է ենթարկել Վարդան Վարդանյանը, որը «Արփի» համատիրության նախագահն է»,- ասաց պարոն Հունանյանը:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Պոստ Սկրիպտում» մամուլի ակումբի հյուրն է «Ժառանգության» փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը:

### Եղանակ

Երեւան + 7 + 23, Շիրակ - 1 + 17, Կոտայք - 1 + 17, Գեղարքունիք - 1 + 17, Լոռի + 3 + 19, Տավուշ + 7 + 21, Արագածոտն լեռներ - 1 + 17, Արագածոտն նախալեռն. + 5 + 22, Արարատ + 5 + 23, Արմավիր + 5 + 23, Վայոց Ձոր լեռներ - 1 + 17, Վայոց Ձոր նախալեռն. + 5 + 23, Սյունիքի հովիտներ + 9 + 19, Սյունիքի նախալեռներ + 4 + 17, Արցախ + 7 + 19

## Քարոզարշավն անցել է հանգիստ եւ անկաշկանդ մթնոլորտում

### Վստահեցնում են տեղական դիտորդները



«Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպությունը երեկ ներկայացրեց նախընտրական շրջանի երկարաժամկետ դիտարկման արդյունքները: Կազմակերպության դիտարկման առարկա են եղել քաղաքական մթնոլորտը, համամասնական եւ մեծամասնական ընտրակարգով կուսակցությունների եւ պատգամավորության թեկնածուների առաջադրման եւ գրանցման գործընթացները, պաշտոնական քարոզարշավը, քարոզչական նյութերը, իշխանությունների գործելակերպը, ընտրողների ցուցակները եւ այլն:

Եզրակացությունը հետեւյալն է. «Պաշտոնական քարոզարշավի դիտարկումների արդյունքում «Ընտրությունը քոնն է» կազմակերպությունը կարծում է, որ նախորդ խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների համեմատ, 2012թ. խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզարշավն անցել է զգալիորեն հավասարակշռված, հանգիստ եւ անկաշկանդ մթնոլորտում»:

Կազմակերպության ղեկավար Հարություն Համբարձումյանը ներկայացնելով որոշ խախտումներ եւ մտահոգիչ երեւույթներ, որոնք տեղի են ունեցել, այդուհանդերձ՝ նշեց. «Այս քարոզարշավն արձանագրել է առաջընթաց՝ նախորդ ընտրությունների համեմատ: Եվ եթե բուն ընտրության օրն էլ անցնի այս որակով, ապա մենք հանգիստ խղճով կարող ենք արձանագրել, որ այս ընտրությունները մի քայլ առաջ են»:

Մ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

## «Միավորված հայերն» ունի համարյա այնքան անդամ, որքան ՀՅԴ-ն

Երեկ «Միավորված հայեր» կուսակցության անդամ Հովհաննես Հովհաննիսյանն ի սրտե վիրավորվեց Aravot.am-ի հարցից: Իսկ հարցը հետեւյալն էր՝ հնարավո՞ր է մի պահ գա, որ ձուլվեք ՀՀԿ-ին կամ ՕԵԿ-ի ճանապարհով գնաք. «Բացառվում է, մենք պոպուլիզմի հիվանդությամբ չենք տառապում: Մենք գիտենք՝ եթե ասում ենք մի բան, ուրեմն պետք է դա կատարվի: Իսկ մենք ասում ենք՝ միայն օրենք եւ իրավունք: Ի՞նչ ՕԵԿ»: Նա ասաց, որ պատրաստ են միանալ, համախմբվել միայն այն կուսակցությունների հետ, որոնք ունեն պետականամետ մտածելակերպ, իսկ նման կուսակցություն այսօր չկա:

Պարզվում է՝ «Միավորված հայերն» ունի 5000 անդամ, այսինքն՝ համարյա այնքան, որքան ՀՅԴ-ն ունի: Մեր հարցին՝ նրանք իսկապե՞ս անդամներ են, թե՞ միայն անդամատոմսով անդամներ են՝ պարոն Հովհաննիսյանը անկեղծ պատասխանեց. «Դե, հարցը գիտեք ինչում է կայանում՝ ասել, որ բոլորն ակտիվ գործում են, իհարկե, ակտիվ չեն գործում, բայցեւայնպես նրանք ընդգրկված են մեր տարածաշրջանային կազմակերպություններում: Ընտրությունները ցույց կտան, թե մեր կուսակցության անդամներն ինչպիսի ակտիվություն ունեն»:

Հ. ՉԵԲԵՉՅԱՆ

# ԲՀԿ ղեկավարն առաջարկում է վերացնել մենաշնորհները

«Ոչ մի բան որոշված չի: Որ որոշված լիներ, այս քաշքշոցը կլինե՞ր»,- երեկ Կարբի գյուղում հայտարարեց ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը՝ անդրադառնալով հանրության շրջանում պտտվող ասեկոսեներին, թե ընտրությունների արդյունքներն արդեն իսկ որոշված են:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության քարոզարշավը երեկ շարունակվեց Արագածոտնի մարզի բնակավայրերում՝ Կարբի, Հնաբերդ, Ծաղկահովիտ, Ապարան, Աշտարակ: Այստեղ եւս Գագիկ Ծառուկյանին դիմավորեցին շատ ջերմ՝ ծափերով, ծաղիկներով, աղավնիներով, «ուռա»-ներով: «Առավոտի» հետ զրույցում կարբեցի Սպարտակ Հակոբյանը հավաստիացնում էր, որ իրենց գյուղի բնակչության 80 տոկոսն առաջիկա խորհրդարանական ընտրություններում իր ձայնը տալու է ԲՀԿ-ին: Մեր զրուցակիցը ԲՀԿ առաջնորդին համարում է «լավ մարդ», քանի որ վերջինս «ժողովրդին շատ ա օգնում, հասկանում»: Ասում է, որ ինքն այլ քաղաքական գործչի չի ճանաչում, չի էլ ուզում ճանաչել: Aravot.am-ի դիտարկմանը՝ օգնություններով երկիր չես պահի, Սպարտակ Հակոբյանը հակադարձեց՝ եթե Ծառուկյանը հնարավորություն ունենա երկիր կառավարելու, ինքը կկարողանա երկիրը ոտի հանել:



Արդեն իր խոսքում ԲՀԿ նախագահը կարբեցիներին կոչ արեց միասնական լինել եւ, որ ամենակարեւորն է, անտարբեր չլինել ընտրական գործընթացների նկատմամբ. «Մեկը կարող է՝ աշխատում է, իր վիճակը լավ է, նա չպետք է մի կողմ քաշվի: Պետք է բոլորի վիճակը լավ լինի, որ մարդը իրեն լավ զգա: Մի ծաղկով գարուն չի գա»: Ծառուկյանը կոչ արեց լսել բոլոր քաղաքական ուժերին, բայց ընտրություն կատարել խորը վերլուծությունից հետո ու սրտի թելադրանքով: Ներկայացնելով կուսակցության ծրագիրը՝ Գագիկ Ծառուկյանն ասաց, որ փոքր եւ միջին բիզնեսը մեր տնտեսության ողնաշարն է, իսկ ժողովուրդը պետության ողնաշարն է, հետեւաբար պետք է ամուր պահել դրանք: Իսկ ամուր պահելու համար, ըստ ԲՀԿ առաջնորդի, մարդու համար պետք է հարմարավետ՝ մատչելի հարկային դաշտ, աշխատանքային պայմաններ ստեղծել ու հետագա վարչարարությամբ չխանգարել մարդուն իր աշխատանքում: «Աշխատող մարդուն խանգարողն ազգի թշնամին է»,- ասաց նա: Ըստ Ծառուկյանի՝ պետք է պետական սուբսիդիաներ տալ մանր ու միջին բիզնեսին: «Պաշտոնյան եթե մեկ շաբաթ հասարակ մարդու կյանքով ապրի, կհասկանա նրա խնդիրները»,- ասաց ԲՀԿ նախագահը՝ հավելելով, որ քաղաքական գործիչները պետք է հաճախ շփվեն մարդկանց հետ, լսեն նրանց, «ձեռքը ուսներին դնեն ու փորձեն հասկանալ», որպեսզի կարողանան առկա խնդիրներին իրական լուծումներ առաջարկել: Հիշատակելով Ալեքսանդր Մակեդոնացուն, ով պատվիրել էր իրեն մահանալուց հետո ձեռքերը բաց թաղել, որպեսզի մարդիկ տեսնեն, որ ինքը իր հետ ոչինչ չի տանում, թեեւ աշխարհի տիրակալն է՝ Գագիկ Ծառուկյանն ասաց. «Մարդը պետք է գիտակցի, որ իր ունեցվածքը իր հետ չի տանելու: Մարդը մահանում-գնում է, անուն ու հարգանք է թողնում: Մարդիկ հավատի ու հույսի կարիք ունեն, եւ այն պաշտոնյաները, ովքեր կանգնում եւ ժողովրդի առջեւ խոսք են ասում, դա պիտի հասկանան»: Ըստ ԲՀԿ առաջնորդի՝ քաղաքական գործիչները իրենց անպատասխանատու եւ ճոճուն հայտարարություններով իրավունք չունեն հասարակությանը կրկին անգամ հիասթափեցնելու: Նրանց խնդիրը պետք է լինի ոչ թե պաշտոնի գալով ժողովրդի հաշվին կարողություն կուտակելը, այլ ժողովրդի համար աշխատանքային պայմաններ ստեղծելը:

Աշտարակում ԲՀԿ նախագահն իր խոսքում անդրադարձավ նաեւ մենաշնորհներին. «Ծառուկյանը երբեք եւ ոչ մի մենաշնորհ չի ունեցել: Այդ մենաշնորհները պիտի վերանան, հավասարաչափ բաժանում պիտի լինի»,- ասաց նա՝ հավելելով, որ ժողովուրդը որեւէ մեկին չի խնդրել քաղաքականություն մտնել: Այն մարդիկ, ովքեր որոշել են քաղաքականությամբ զբաղվել, դա ինքնակամ են արել ու պետք է հասկանան, որ դա նշանակում է անքուն գիշերներ, ժողովրդի մասին մտածել այնպես, ինչպես յուրաքանչյուրն իր ընտանիքի մասին է մտածում:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Երեւա՛ն, Դաշնակցության հույսը դո՛ւ ես»

Երեկ Ազատության հրապարակում ՀՅԴ-ի նախաձեռնած ամփոփիչ հանրահավաքում ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Վահան Հովհաննիսյանը հայտարարեց, թե քարոզարշավի ընթացքում կուսակցության հանդիպումները գնալով ավելի ոգեւորիչ էին դառնում, ամեն օր եւ ամեն մի հանդիպում ավելի մարդաշատ ու բոցաշունչ էր լինում: Վահան Հովհաննիսյանի ասելով՝ մարդիկ, հավատալով ՀՅԴ հաղթանակին, կուսակցության ներկայացուցիչների առջեւ արդեն լուրջ հարցեր էին դնում, որոնց պատասխանները, Վահան Հովհաննիսյանի ասելով, ՀՅԴ-ն տվել է այս մեկ ամսվա ընթացքում եւ դեռ տալու է: «Ոչ մի կուսակցության ծրագիր, նույնիսկ մերը՝ կատարյալ լինել չի կարող»,- ասաց Վահան Հովհաննիսյանը՝ արձանագրելով, որ քարոզարշավի ընթացքում արված հարցադրումներն ու հանդիպումներն է՛լ ավելի հարստացրին ՀՅԴ ծրագիրը, եւ «մայիսի 7-ին մենք կատարելու ենք ոչ միայն այն, ինչ խոստացել ենք, այլ ավելին՝ անդրադառնալու ենք այն խնդիրներին, որոնք ձեր օգնությամբ ճանաչելու, ախտորոշելու եւ որոշելու ենք ինչ անել»: Վահան Հովհաննիսյանն ասաց, թե քարոզարշավային հանդիպումները ՀՅԴ-ին համոզեցին, որ մեր ժողովուրդը կոտրված չէ, հիասթափված չէ, եւ այդ զգացողությունները հնարավոր է հաղթահարել միմիայն Դաշնակցության հետ: «Եթե ամսի 8-ին ՀՅԴ-ն հաղթի՝ մենք կսկսենք մեր նոր կյանքը»,- ասաց Հովհաննիսյանը՝ հավելելով, որ մարզերում մարդիկ դժվար կյանքով են ապրում, եւ որպես հնաբնակ երեւանցի՝ դիմեց իր համաքաղաքացիներին. «Սիրելի՛ երեւանցիներ, ես ձեզ դիմում, պահանջում եմ՝ օգնենք մեր հայրենակիցներին, որովհետեւ մարզերում, այնուամենայնիվ, ժողովուրդը ճնշված է, նրանք կարող են չդիմանալ ընտրակաշառքի, փողի գայթակղությանը, բայց դուք, Երեւան, պիտի փրկեք ամբողջ հանրապետությունը: Երեւա՛ն, դա քեզնից է կախված»: Վահան Հովհաննիսյանն ասաց, թե Երեւանում ՀՅԴ-ն պետք է ստանա ամենաշատ ձայները, որ կարողանա երկրում իրավիճակ փոխել. «Երեւա՛ն, դու պիտի փրկես, դու մայրաքաղաքն ես, մենք՝ երեւանցիներս, պատասխանատու ենք, պիտի Երեւանում Դաշնակցությունը ստանա բոլորից շատ ձայն, որ կարողանա հաղթանակ արձանագրել նաեւ մարզերում: Երեւա՛ն, այսօր հույսը դո՛ւ ես»:



Ն. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# Գյումրիում արդեն բաժանե՞լ են փողերը

Երեկ, ելույթ ունենալով Գյումրու Թատերական հրապարակում, Արթուր Բաղդասարյանը նախքան ՕԵԿ-ի ծրագիրը ներկայացնելը, հանրահավաքի մասնակիցներին հարցրեց, թե Գյումրիում արդեն բաժանե՞լ են փողերը: Հավաքվածները միաբերան գոչեցին՝ «հա, բաժանել են», որից հետո ՕԵԿ առաջնորդը ծիծաղելով խորհուրդ տվեց. «Երեկ հանրային հեռուստատեսությամբ իմ ելույթը լսե՞լ եք, ես ասեցի՝ վերցրեք՝ ձեն մի տվեք: Էն մարդիկ, ովքեր իրոք արհամարհում են ժողովրդին, ժողովուրդը պետք է կարողանա համարժեք պատասխան տալ, որովհետեւ մենք այսօր Ազգային ժողովում ունենք պատգամավորներ, որոնք համ խուլ են, համ լալ են: Խուլ լինելը շատ պարզ ուղերձ է, խուլ են, որովհետեւ նրանք չեն լսում ժողովրդի պրոբլեմները, լալ են, որովհետեւ տեսնելով էդ պրոբլեմները՝ ոչ մի բան չեն խոսում, որովհետեւ նրանց համար միեւնույն է: Եվ ցավը նա է, երբ որ 20 տարի, 10 տարի, 15 տարի Ազգային ժողովում ունենք պատգամավորներ, որոնք խուլ ու լալ լինելով հանդերձ, մասնավոր զրույցներում ասում են՝ փողը կտանք, կառնենք, ոնց որ մի կիլո կարագ կամ միս են առնում: Դրա համար հայ ժողովուրդը մայիսի 7-ից հետո, եթե նորից պիտի ասի վատ եմ ապրելու, պետք է առաջին հերթին իրեն մեղադրի, որովհետեւ ինքը չի կարող լավ ապրել, ո՞նց լավ ապրի, եթե մարդիկ թքում են ձեր թասիբի, արժանապատվության վրա եւ հայտարարում են՝ փողը տվել, առել եմ, ինձանից էլ ի՞նչ ես ուզում»:

Արթուր Բաղդասարյանը ժողովրդին հորդորեց մասնակցել ընտրություններին եւ «սրտի մտոք ու ջիգյարով» քվեարկել այն ուժերի օգտին, որոնք երկիրը տանելու են զարգացման: Նա խոստացավ այնպես անել, որ մինչեւ 2013 թվականը Գյումրիում տնակներ չլինեն, աղետի գոտի հասկացությունը այլեւս չլինի, եւ սա ոչ թե գեղեցիկ խոսքերով, այլ գործով, իսկ իր հայրենի Շիրակ աշխարհի բնակչությանը հետ պահել խոպան գնալուց՝ աշխատատեղեր ստեղծելով: Վերջում էլ ներկայացնելով ՕԵԿ-ի մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուին՝ Հովհաննես Մարգարյանին, Ա. Բաղդասարյանն ասաց. «Այսօր Հովիկ Մարգարյանը ժողովրդական հերոս է, քանի որ պայքարի է դուրս եկել փողի ու զոռբայության դեմ»: Հիշեցնենք, որ Հովհաննես Մարգարյանի մրցակիցը ՀՀԿ-ական Աշոտ Աղաբաբյանն է:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

# «Չեմ հավատում»

Հակադարձելով փոփոխություններ անելու՝ իշխանությունների խոստումներին, ասում է Արաբկիրի թիվ 4 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով առաջադրված անկուսակցական պատգամավորության թեկնածու Սաթիկ Սեյրանյանը:

- Նախընտրական քարոզարշավն արդեն մոտենում է ավարտին: Ինչպե՞ս եք այն գնահատում թիվ 4 ընտրատարածքում, որտեղ Դուք առաջադրվել եք:

- Մեր ընտրատարածքում, ինչպես եւ վստահ եմ՝ մյուս բոլոր ընտրատարածքներում, հայկական, «ավանդական» իրավիճակ է: Իշխանության բոլոր մարմինները ամեն ինչ անում են մինչեւ ընտրությունները իրենց թեկնածուի «անցումը» (դա հաղթանակ չէ, այլ անցնել է) ապահովելու համար: Բազմիցս առիթ ունեցել եմ նշելու՝ այդ նպատակով կիրառվում են բոլոր հայտնի մեթոդները՝ վարչական ռեսուրսի ներգրավում, մարդկանց նկատմամբ ահաբեկումներ, վախի մթնոլորտ եւ ամենակարեւորը՝ ընտրակաշառքների բաժանում: Դժբախտաբար, մարդիկ այնպիսի սոցիալական վիճակում են, որ ոմանք նաեւ վերցնում են այդ գումարները: Եվ ընտրական գործընթացի ժամանակ ակնհայտ է դառնում առաջին հայացքից աբսուրդային թվացող մի իրողություն՝ իշխանություններին ձեռնտու է մարդկանց սոցիալական ծանր վիճակը. որքան մարդիկ ավելի վատ պայմաններում են ապրում, որքան ավելի սրված է հանապազօրյա հացի խնդիրը, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ նրանք ստիպված ընտրակաշառք կվերցնեն: Իրականում այս ընտրակաշառքների մեքենայի գոյությունը հանգեցրել է շատ բացասական, վտանգավոր հանգրվանի՝ իշխանությունը իր չափանիշներով գնահատում է մարդուն: 5, 10, թե 50 հազար դրամ՝ այնքան էլ էական չէ: Եվ ես ընտրողների հետ իմ հանդիպումներում տեսնում եմ հավաքական մի դիրքորոշում, որի մասին մարդիկ, իհարկե, չեն խոսում, սակայն դա դժվար չէ զգալ. շատերը, իմ զգացողությամբ, վերցնելով այդ ընտրակաշառքները, գնալու են ընտրության եւ ընտրելու են իրենց ցանկացած թեկնածուին կամ քաղաքական ուժին: Այդպիսով մարդիկ կարծես լուռ պատասխանում են իշխանությանը՝ ցույց տալով, որ հասարակության հետ չի կարելի վերաբերվել որպես վաճառվող ձայների:

- Բայց այս անգամ այդ ամենը կարծես ավելի շատ արվում է «բարեգործության» անվան տակ:



- Հայաստանում բարեգործությունը եւս արժեզրկվել է: Բարեգործությունը չի լինում սեզոնային կամ ըստ ընտրական ժամանակաշրջանի: Եվ հետո՝ Ընտրական օրենսգիրքը հստակ սահմանում է, որ բարեգործությունը եւս համարվում է ընտրակաշառք, եթե դրա աղբյուրը ասոցացվում է որեւէ թեկնածուի կամ կուսակցության հետ: Հիմա փողոցներ են ասֆալտապատում, բակեր են վերականգնում՝ բնականաբար, բնակիչներին մեկ-մեկ տեղեկացնելով, թե ում կողմից է դա արվում: Ընդ որում, այդ աշխատանքների մի մասը կատարվում է մեր գումարներով՝ Արաբկիրի վարչական շրջանի կողմից, որի ղեկավարը ակտիվորեն ներգրավված է ՀՀԿ-ի թեկնածուի քարոզարշավին: Սակայն բնակիչների հետ հանդիպումների ժամանակ ես զգում եմ, որ մարդիկ չեն հրապուրվում այդ կեղծ «բարեգործություններով»: Ճիշտ հակառակը՝ շատ շատերը դրանք համարում են իրենց արժանապատվությունը ոտնահարող քայլեր եւ ասում են, որ իրենց ոչ թե բարեգործություն է պետք, այլ աշխատելու եւ ապրելու նորմալ պայմաններ: Մարդիկ ուզում են հավասար հնարավորություններ փոքր բիզնեսով զբաղվելու, պետության կողմից հարկային եւ բյուրոկրատական տեռորի չենթարկվելու երաշխիքներ: Օրինակ՝ այն, ինչ կատարվեց անցած տարի կրպակատերերի եւ փողոցային առեւտրով զբաղվողների հետ, քաղաքի էսթետիկական տեսանկյունից գուցե հաճելի էր, սակայն այսօր իմ հանդիպումներին գալիս են տասնյակ մարդիկ, ովքեր տարիներ շարունակ գոյություն են պաշտպանել նաեւ փողոցում միրգ վաճառելով կամ փոքր կրպակ աշխատեցնելով: Երբ այդ առեւտուրը արգելվեց, քաղաքային իշխանությունը խոստանում էր, որ առեւտրականների համար այլ վայրերում առեւտուր անելու պայմաններ կստեղծվեն: Սակայն ոչինչ չի արվել այդ ուղղությամբ: Փոխարենը՝ կրպակներում եւ մայթեզրերին վաճառվող ապրանքները բնակիչները ստիպված են գնել սուպերմարկետներից՝ բնականաբար, ավելի թանկ գներով: Չնայած հիմա քաղաքային իշխանությունները նաեւ խոստանում են կրպակների նոր թույլտվություններ տալ՝ ՀՀԿ-ի թեկնածուի օգտին ձայներ բերելու դիմաց:

- Ձեր ասածներից կարելի՞ է ենթադրել, որ թիվ 4 ընտրատարածքում հիմնական մրցակից եք համարում ՀՀԿ-ի կողմից առաջադրված Արտակ Սարգսյանին:

- Այո, քանի որ մյուս թեկնածուները՝ ՀԱԿ անդամ Արամ Մանուկյանը եւ «Ժառանգության» ներկայացուցիչ Զարուհի Փոստանջյանը, իմ տպավորությամբ, ավելի շատ զբաղված են իրենց քաղաքական ուժերի քարոզչությամբ: Առավել ակտիվ է Արամ Մանուկյանը, նա հանդիպումներ է ունենում բնակելի շենքերում՝ տուն առ տուն: Նրանց քիչ ակտիվությունը գուցե նաեւ պայմանավորված է նրանով, որ զբաղեցնելով անցողիկ տեղեր իրենց համամասնական ցուցակներում՝ նրանք, այսպես, թե այնպես, ընտրվելու են որպես պատգամավոր: Հասկանալի է, որ այս ընտրությունների հիմնական ինտրիգը քաղաքական ուժերի հարաբերակցությունն է ապագա խորհրդարանում: Սակայն տարօրինակ է, թե ինչու են ընդդիմադիր այդ թեկնածուները առաջադրվել նաեւ մեծամասնական ընտրակարգով, հատկապես, որ այդպիսով ավելի դժվարացնում են իշխանության թեկնածուի դեմ պայքարը: Ինչ վերաբերում է Արտակ Սարգսյանին, ապա ես նորմալ եմ վերաբերվում, որ առանձին վերցրած ինչ-որ թեկնածու այդպիսի գործելաոճ է որդեգրել, գուցե ավելին չի կարող: Ինձ մտահոգում է, որ այդ գործելաոճը խրախուսվում եւ աջակցություն է ստանում իշխանության կողմից՝ ամենաբարձր մակարդակով: Իշխանությունն ասում է՝ «Հավատանք, որ փոխենք»… Ես չեմ հավատում, քանի որ ամեն օր տեսնում եմ՝ ինչ է անում իշխանությունը գոնե մեր ընտրատարածքում: Վստահ եմ, որ նույնը տեղի է ունենում նաեւ հանրապետության ողջ տարածքում: Իրականում իշխանությունն ասում է՝ «վախեցեք, որ չփոխենք», «կաշառվեք, որ չփոխենք», «հուսահատվեք, որ չփոխենք»: Մարդկանց փող տալով զրկում են նաեւ ամենամարդկային՝ ինչ-որ բանի չհավատալու սահմանադրական իրավունքից:

- Քարոզարշավն արդեն մոտենում է ավարտին: Ինչպե՞ս եք գնահատում ընտրվելու Ձեր շանսերը:

- Մի քանի անգամ ավելի բարձր, քան գնահատում էի թեկնածությունս առաջադրելու ժամանակ: Դա չեմ ասում այն պատճառով, որ այդպես է ընդունված ասել: Անցած մոտ մեկ ամսվա ընթացքում մի քանի տասնյակ հանդիպումներ եմ ունեցել Արաբկիրի բնակիչների հետ, եւ նրանց արձագանքն ու վերաբերմունքն են թույլ տալիս բարձր գնահատել հնարավորություններս: Իմ հնարավորությունների սահմաններում ամեն ինչ անելու եմ այդ մարդկանց ձայնը պահելու համար՝ ոչ միայն իմ հաղթանակի նպատակով: Մարդիկ այսօր ծայրաստիճան հուսահատված ու հիասթափված են, եւ եթե եւս մեկ անգամ նրանց ընտրությունը կեղծվի, իրենց ընտրած թեկնածուի փոխարեն «անցնի» մեկ ուրիշը, այդ հիասթափվածությունն ավելի է խորանալու: Ես չեմ ուզում գոնե Արաբկիրում դա տեղի ունենա եւ ամեն ինչ անելու եմ դրա դեմ պայքարելու համար:

Զրույցը՝

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

## ՄԵԿ ԼՈՒՐ

### ՀԱԿ-ը գալիս է համակարգ փոխելու

«Հանրապետություն» կուսակցության առաջնորդ Արամ Սարգսյանը Գյումրիում կայացած ՀԱԿ հանրահավաքի ժամանակ օրինակ բերելով իր ընկերներին՝ միջազգային մասշտաբի գիտնական Հրանտ Բագրատյանին, Կարեն Դեմիրճյանի որդուն՝ Ստեփան Դեմիրճյանին, ու նաեւ իրեն՝ որպես սպարապետ Վազգեն Սարգսյանի եղբոր, ասաց, որ իրենք այնպիսի մարդկանց զավակներ ու եղբայրներ են, ովքեր Հայաստանում ապրելու խնդիր չունեն. իրենց ճանապարհները բաց են այս երկրում, սակայն ընդդիմություն լինելը իրոք հաճույք է:

«Հավատացնում եմ ձեզ, ընդդիմություն լինելու հաճույքը անհամեմատ շատ ավելի մեծ է, քան ցանկացած իշխանության, ճիշտն ասելու իրավունքը, որ դու կարող ես մարդկանց առջեւ կանգնել, նայել աչքերին, ասել ճիշտը, ինչ մտածում ես. էդ հաճույքը անգնահատելի է, դրան անվանում են ազատություն»,- ասաց Արամ Սարգսյանը՝ շեշտելով, որ ՀԱԿ-ը չի գալիս մարդուն մարդով փոխելու համար, այլ իրենք գալիս են համակարգ փոխելու:

Ն. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

# Բացահայտվում է «ՊԱԶ-ի շոֆերից՝ միլիոնատեր» դառնալու գաղտնիքը

Նիկոլ Փաշինյանը ՀԱԿ-ի մարզային քարոզարշավներում խնդրեց Հանրապետականին լավություն անել ու մի գաղտնիք բացել կամ, ավելի շուտ, ուղեցույց հրապարակել, թե այդ ինչպե՞ս կարելի է ընդամենը 5 տարում «ՊԱԶ-ի շոֆերից դառնալ միլիոնատեր»: Խոսքը ՀՀ նախագահի եղբայր Սաշիկ Սարգսյանի մասին է, որը, ըստ Կոնգրեսի, իրենց ընտրվելու դեպքում 95 թվի պես իր ընտանիքը պահելու համար պիտի Բալահովիտ-Երեւան երթուղում նորից իր ՊԱԶ-ը քշի:

Այսօր Aravot.am-ի հետ զրույցում մենք ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանին խնդրեցինք «ՊԱԶ-ի շոֆերից՝ միլիոնատեր» դառնալու գաղտնիքը բացել: Գալուստ Սահակյանն առաջարկեց դա սկսել հենց իրենցից՝ ՀԱԿ-ից. «Իրենք 15 տարի է՝ իշխանությունից դուրս են եկել՝ ես կերազեի նրանց կեսի կեսի հազուկատն ունենալ: Այնպես որ, եթե իրենցից սկսենք՝ շատ նորմալ կգնար: Եթե Կռազի շոֆերը, ՊԱԶ-ի շոֆերն այն ժամանակ օրուգիշեր աշխատել են, բնականաբար, այն թվականներին բավականին մեծ եկամուտներ էին ունենում: Բայց Մատենադարանի կրտսեր կամ ավագ մասնագետը, կարծում եմ, շատ սահմանափակ դրամ էր ստանում եւ 3 տարին մեկ 1 վերնաշապիկ էր փոխում: Իսկ այսօր հզորացված ձեւով գնում են առաջ, արդեն աշխատելու խնդիր էլ չունեն: Պիտի իրենցից սկսել, թող սրբեր չձեւանան»:

Ըստ Գալուստ Սահակյանի՝ իշխանավորն իր ապրելակերպով պիտի օրինակ ծառայի. «Այդ օրինակի մեջ մտնում է հետեւյալը՝ ոչ թե պիտի աղքատ ապրես, որ սուրբ լինես, այլ պիտի ապրես այնպես, որ ինքդ քո հաշվին ապրես ու հարուստ ապրես: Եվ դա օրինակ դառնա ընդհանրապես հասարակության համար: Ոչ թե պիտի աղքատների դեմ պայքարես, այլ՝ աղքատության»: Մեր հարցին՝ Սաշիկ Սարգսյանն այդ օրինակը ծառայո՞ւմ է՝ Գալուստ Սահակյանը պատասխանեց. «Սաշիկ Սարգսյանը մոտավորապես



այնքան լեզուներ գիտի, ինչքան ամբողջ իրենց թիմը՝ տարբեր լեզուների առումով: Եվ շատ գրագետ գիտի այդ լեզուները: Այնպես որ, եթե ժամանակին կարողացել են իրենց հանգուցալուծումը գտնել եւ մեսիջներով ուղղորդված գալ-մտնել հասարակություն՝ դա իրավունք չի տալիս մարդկանց արդար մոտեցումներն ու գրագիտությունը կապել «Կռազի» շոֆերի հետ: «Կռազի» շոֆերներն այն թվականներին ամենալավ ապրող մարդիկ էին մեր հասարակության մեջ: Ես ուսուցիչ եմ եղել, դպրոցի տնօրեն, մի քանի անգամ ավելի լավ էին իրենք ապրում»:

Մեր հարցին՝ այսօր ՀՀԿ-ն խոստանո՞ւմ է ստեղծել այնպիսի պայմաններ, որ այսօրվա վարորդները դառնան միլիոնատերեր՝ նա պատասխանեց, որ իրենք պայքարում են նրա համար, որ բոլորը լավ ապրեն. «Վարորդների համայնքը այսօր կարողանում է իր ապրուստն ունենալ: Չէի ասի, որ շատ գոհ են, համենայնդեպս, հանրապետությունում որպես աշխատատեղ վարորդների շատ կարիք կա: Վարորդներին, կարծում եմ, սոցիալապես անապահով խավերի մեջ դասել չի կարելի: Բայց միեւնույն ժամանակ ինչքան լավ ապրես, պիտի ձգտես ավելիին»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

# «Ընտրական գործընթացների վրա փորձում են ազդել»

## Թիվ 12 ընտրատարածքում առաջադրված Լյովա Խաչատրյանն ընտրությունների ժամանակ չի բացառում պրովոկացիաները, միջադեպերը:

- Երկու անգամ պատգամավոր եք ընտրվել Ապարանի տարածաշրջանն ընդգրկող թիվ 14 ընտրատարածքից: Հիմա առաջադրվել եք թիվ 12-ում, ինչը շատերի համար նույնիսկ անհասկանալի է:

- Ես 8 տարի ապրում էի իմ պապական օջախում, որ մոտ լինեմ իմ ընտրողներին, համայնքներին: Կարծես թե ստացվել է աշխատանքը: Փորձեցի գյուղատնտեսությանն օգնել՝ ոտքի կանգնեցնել, բայց հասկացա, որ մեկ ոլորտ վերցնել ու ոտքի կանգնեցնել՝ հնարավոր չէ, երբ համակարգային փոփոխությունների անհրաժեշտություն կա: Շատ գործեր արեցինք՝ ջրագծեր, ճանապարհներ, դպրոցներ եւ այլն, բայց հասկացա, որ ինչքան շատ ենք անում, այնքան դրանից օգտվողները քչանում են: Մարդիկ ավելի աղքատանում են: Պետք են համակարգային փոփոխություններ: Ես այդ տարածքի բոլոր խնդիրները գիտեմ, նոր բան իմանալու առումով այդ տարածքն արդեն ինձ համար հետաքրքրություն չի ներկայացնում: Ես շարունակելու եմ այդ տարածքով էլի զբաղվել: Ես ՀՀ քաղաքացի եմ, ապրում եմ Հայաստանում, իսկ պատգամավորը միայն ինչ-որ տեղի խնդիրներով զբաղվելու համար չէ: Որոշել եմ զբաղվել քաղաքականությամբ, այդ իսկ պատճառով էլ անդամագրվեցի «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը եւ առաջադրվեցի՝ արդեն վերադառնալով իմ ծննդավայր Երեւան:

- Այս ընթացքում տարբեր մեկնաբանություններ եղան, որ Ձեզ խանգարեցին թիվ 14-ում առաջադրվելու համար: Գլխավոր դատախազի անունը շրջանառվեց: Ճշմարտության հատիկ կա՞ այդ ամենում:

- Ես չէի ասի, որ որեւէ մեկը կարող է ինձ խանգարել կամ չխանգարել: Քաղաքականություն է, ամեն մեկն իր շահն է հետապնդում: Իմ եւ շատ մարդկանց տարբերությունն այն է, որ ես ժողովրդի շահով եմ եղել միշտ զբաղված՝ ի տարբերություն ոմանց, ովքեր անձնական շահն են միշտ հետապնդել: Ես որոշել եմ զբաղվել քաղաքականությամբ, այդ իսկ պատճառով էլ առաջադրվել եմ Երեւանում, անդամակցեցի ԲՀԿ-ին, որ քաղաքական ուժի օգնությամբ իրագործեմ շատ ծրագրեր՝ սկսած օրենսդրական նախաձեռնություններից՝ բանկերի եւ վարկերի հետ կապված, որոնք արդեն տարիների ընթացքում շրջանառության մեջ են, ու այդպես էլ չկարողացա մեծ օրակարգ մտցնել: Այն դեպքում, երբ ես որեւէ առաջարկի համահեղինակ էի՝ խնդիր չկար, իսկ միանձնյա հեղինակած նախաձեռնությունների պարագայում ինձ համար անցկացնելու դժվարություններ էին լինում:



- ՀՀԿ-ի հետ կարծես պայմանավորվածություններ ունեիք ու շատ անակնկալ անդամակցեցիք ԲՀԿ-ին:

- Որովհետեւ ԲՀԿ-ի խոսքն ու գործը իրարից չեն տարբերվում: Իմ խոսքն ու գործն էլ իրարից չեն տարբերվել երբեք, այդ իսկ պատճառով հավատում եմ ԲՀԿ-ին ու նրա ղեկավարին, ով իր համար անելիք չունի, մտածում է երկրի, տնտեսության զարգացման մասին:

- ՀՀԿ-ի խոսքը գործից տարբերվո՞ւմ էր:

- ՀՀԿ-ի տնտեսական ծրագիրն այս տարիների ընթացքում, որը փայլուն կերպով իրագործեցին նաեւ կոալիցիոն գործընկերները, բերեց ոչ թե տնտեսական աճի, այլ աղքատության ավելացման, տնտեսության քայքայման, աշխատատեղերի կրճատման:

- ԲՀԿ-ն էլ էր կոալիցիոն գործընկեր:

- ԲՀԿ-ն իրագործել է քաղաքական մեծամասնության տնտեսական ծրագիրը, եւ քաղաքական մեծամասնությունը երբեք չի ասել, որ ԲՀԿ ներկայացուցիչ որեւէ նախարար իր պարտականությունների մեջ թերանում է: Նրանք շատ մեծ հաջողությամբ իրենց պարտականությունները կատարեցին, բայց արդյունքում պարզվեց, որ այդ տնտեսական ծրագիրը կամ սխալ էր, կամ էլ նպատակաուղղված էր տնտեսության քայքայմանը: Այնպես որ՝ ես այդտեղ չեմ տեսնում պատասխանատվություն:

- Թիվ 12-ում հետաքրքիր պայքար է սպասվում, համարյա բոլոր քաղաքական ուժերը թեկնածուներ ունեն: Դուք ձեզ համար ի՞նչ հետեւություններ եք արել:

- Ինձ համար շատ հետաքրքիր էր, որ նախորդ օրը ընտրողների հետ հանդիպման ժամանակ ՕԵԿ ղեկավարները ամբիոնից նույնիսկ չհայտարարեցին, թե ով է այս տարածքում իրենց թեկնածուն. կամ ամաչեցին, կամ մտածեցին՝ հայտարարեն, բոլորը կիմանան, որ Մասումյան Ռուբիկը ՕԵԿ-ի անդամ է եւ իրենց թեկնածուն է՝ ձայներ կկորցնեն: Նկարը կպցրել են ՀՀԿ-ի շտաբի վրա, բուկլետները բաժանում է ՀՀԿ շտաբը, ինքը ներկայացված է ՕԵԿ-ի կողմից... Կարծում եմ՝ այդ կուսակցությունների որոշ անդամներ ու իրենց թեկնածուն իրար համապատասխան են:

- Ձեր մրցակիցներից մեկը մի առիթով հայտարարել էր, որ «քաղաքական հնոտին այլեւս անելիք չունի»: Դուք Ձեզ այդպիսին համարո՞ւմ եք:

- «Քաղաքական հնոտի» հասկացողությունը, իմ կարծիքով, վերաբերում է քաղաքական դիակներին, որոնք իրենց սպառել են: Իհարկե, ես ինձ այդպիսին չեմ համարում, որովհետեւ ժողովուրդն ինձ ընդունում է: Ես եղել եմ հրապարակային քաղաքական գործիչ, շատ քչերին եմ զիջել եւ մամուլի հետ շփումներում, եւ հրապարակային ելույթներով: ԱԺ-ում լինելով արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ՝ վարկային ծրագրերի, միջազգային պայմանագրերի 60-70 տոկոսը հանձնաժողովն ինձ է վստահել ԱԺ ներկայացնելու համար: Ես նոր սկսում եմ զբաղվել քաղաքականությամբ: Մինչ այժմ ես ինձ համարել եմ սենատոր, որովհետեւ քաղաքական ուժի անդամ չեմ եղել, եղել եմ կապող օղակ գործադրի, օրենսդիր մարմինների եւ ժողովրդի միջեւ:

- Զուտ մրցակցային առումով ինչպե՞ս եք գնահատում իրավիճակը այս ընտրատարածքում:

- Մամուլում գրվեց, որ ուժային կառույցներից մեկի ղեկավարը հանցագործների խումբ է ստեղծել՝ ընտրությունների ընթացքի վրա ազդեցություն ունենալու համար: Կարծես դրա արձագանքների մի մասը կա նաեւ այստեղ՝ ընտրական պրոցեսների վրա ազդելու համար: Դա նկատելի է եւ Աջափնյակում, եւ Արագածոտնի մարզում, ու դա պատահական չէր կարող լինել: Իսկ ո՞վ պետք է ընտրական գործընթացների հետ կապված խնդիրներին անաչառ լուծում տա: Վստահել այն կառույցին, որը հանցագործների հետ համատեղ ընտրական գործընթաց է իրականացնում՝ չեմ կարող: Հետեւաբար, կցանկանայի՝ միջազգային կառույցները, երկրի ղեկավարությունը մատնացույց անեն՝ ո՞ր կառույցին կարելի է վստահել՝ որպես անկողմնակալ կառույց, հենվել դրա վրա, եթե ընտրական գործընթացների ընթացքում օրենքից շեղումներ լինեն:

- Ինչպե՞ս եք պատրաստվում վերահսկել ընտրությունների ընթացքը եւ Ձեր ձայները:

- Կաշխատենք պահել ամբողջ թիմով: ԲՀԿ-ն մեծ ներուժ ունի: Բայց երբ դատավորը կողմ է ներկայացնում եւ ոչ թե կանգնած է վեր՝ տվյալ խնդրից՝ դա է անհանգստացնում, քանի որ պրովոկացիաները, միջադեպերը, ընդհարումները բացառված չեն: Ո՞վ է այդ անաչառ դատավորը, որը կանի դա: Կառույցը, որը պարտավոր է անել, բացահայտ կողմ է թեկնածուներից կոնկրետ մարդկանց, հետեւաբար ոչ բարոյական, ոչ իրավական իրավունք ունի դատավոր լինելու ծագած խնդիրներում:

Զրույցը՝ ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

# «ՌԻՈ+20» ազգային զեկույցի նախագծի քննարկո՞ւմ, թե՞ իմիտացիա

2012 թ. հունիսին Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո քաղաքում նախատեսված է անցկացնել ՄԱԿ-ի «ՌԻՈ+20» գագաթաժողովը, որին մասնակցելու են գերտերությունների ղեկավարներ եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ աշխարհի 110 երկրներից: Գագաթաժողովի մասնակից երկրների շարքում է նաեւ Հայաստանը: Գագաթաժողովում նախատեսվում է լսել երկրների ընդհանուր վիճակի վերաբերյալ ազգային զեկույցներ (վերջին 10-ից 20 տարիների ընդգրկմամբ), ինչպես նաեւ քննարկել առաջիկա 20 տարիներին երկրագնդի բնակչությանը սպասող մարտահրավերներին դիմակայելու առաջնահերթ լուծումներ:

Այս տարվա ապրիլի 6-ին «Կոնգրես» հյուրանոցում ՀՀ կառավարությունը ներկայացրեց «ՌԻՈ+20» ազգային զեկույցի նախագիծը, որի մշակմանը մասնակցել էր նաեւ Կայուն զարգացման ազգային խորհուրդը: Հակառակ այն ակնկալիքներին, որ քննարկմանը մասնակից կլինեն հ/կ-ների բազմաթիվ ներկայացուցիչներ, նախագծի քննարկումն անցկացվեց կիսադատարկ դահլիճում եւ տպավորությունն այնպիսին էր, որ կազմակերպիչները միայն նպատակ էին հետապնդում ցույց տալու, որ իբր զեկույցը քննարկվել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Այդ էր վկայում այն փաստը, որ միջոցառումը բացելուց հետո քիչ ժամանակ անց դահլիճից հեռացան ՀՀ բնապահպանության նախարարը, ՀՀ նախագահին կից հանրային խորհրդի նախագահը եւ նրանց ուղեկցող անձինք: Դահլիճում մնացին կառավարության երկրորդական-երրորդական կարգի 3-4 ներկայացուցիչ եւ քիչ թվով հ/կ-ների ներկայացուցիչներ:

ՀՀ կառավարության կողմից վառվռուն գույներով նկարագրված ազգային զեկույցում Հայաստանը ներկայացված է որպես բարեկեցիկ, լավ եւ ապահով երկիր, որին կնախանձեին անգամ սկանդինավյան երկրները: Քննարկման մասնակից քաղաքացիական հասարակության գրեթե բոլոր, այդ թվում՝ «Կայուն զարգացման ծրագրի» (ԿԶԾ) Քաղաքացիական համագործակցության ցանցի (ՔՀՑ) ներկայացուցիչները դեմ արտահայտվեցին ներկայացված զեկույցի նախագծին: Միջոցառմանը ելույթ ունեցողների կողմից հիշատակվեց նաեւ 2009թ. փետրվարի 14-ին կառավարության հետ ստորագրված ԿԶԾ Համաձայնագիրը, ըստ որի՝ նախատեսված է ԿԶԾ շրջանակներում ծրագրի մշակման, իրականացման, մոնիտորինգի եւ գնահատման գործընթացներում ՔՀՑ-ի, որպես հավասար գործընկեր կողմի, ակտիվ մասնակցությունը: Այդ նպատակով ստեղծվել էին, համապատասխանաբար՝ աշխատանքային խումբ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի ղեկավարությամբ եւ համակարգող խորհուրդ՝ ՀՀ վարչապետի գլխավորությամբ: Սակայն անցած 3 տարիների ընթացքում տեղի է ունեցել խորհրդի միայն մեկ նիստ՝ ՀՀ վարչապետի որոշմամբ նախատեսված առնվազն 6 նիստի եւ աշխատանքային խմբի 4 նիստ՝ նախատեսված առնվազն 12 նիստի փոխարեն: ՔՀՑ խորհրդի անդամները եւ համակարգող խորհրդում ՔՀՑ ներկայացուցիչները բազմիցս դիմել են վարչապետին, որպեսզի հրավիրի խորհրդի նիստ, սակայն վարչապետը մինչ օրս, անհայտ պատճառներով, լռում է եւ չի արձագանքում: Չնայած ՀՀ կառավարության կողմից հարուցված բազմաթիվ խոչընդոտներին եւ ԿԶԾ շրջանակում կնքված համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունների չկատարմանը՝ ՔՀՑ շարքերը (ոլորտային խմբերը) համալրվում են նորանոր ոչ կառավարական կառույցներով, տարբեր ոլորտների (տնտեսության զարգացման, բնապահպանության, գյուղատնտեսության, կրթության, առողջապահության եւ այլն) բազմաթիվ պրոֆեսիոնալ մասնագետներով: Ներկա դրությամբ ԿԶԾ ՔՀՑ -ում ներգրավված են հարյուրից ավելի ոչ կառավարական կառույցներ:

Երկրի զարգացման գործընթացներում այսօր ՔՀՑ-ն պատրաստակամ է աջակցելու վարչապետին, կառավարությանը, ինչը նախատեսված է ոչ միայն ԿԶԾ համաձայնագրով, այլեւ երկրի առջեւ ծառացած այլ մարտահրավերներով: Սակայն, ցավոք, ՀՀ կառավարությունը չի մեկնում իր ձեռքը մեր պարզած ձեռքին, ինչի ապացույցն է հիշատակվող ազգային զեկույցի կազմման ու քննարկման գործընթացը: Այսպես, ըստ ԿԶԾ ՔՀՑ խորհրդի անդամների, «ՌԻՈ+20» ազգային զեկույցի նախագիծը կառավարությունը նախ պետք է ներկայացներ ԿԶԾ ՔՀՑ -ին՝ վերջինիս ոլորտային խմբերում մանրակրկիտ քննարկելու, կարծիքներ հայտնելու եւ առաջարկություններով հանդերձ մասնակցելու նախագծի մշակմանը: Սակայն նախագիծը ԿԶԾ ՔՀՑ-ին ներկայացնելու եւ նրա հետ մշակելու փոխարեն, վերոնշյալ գործընթացներն իրականացվել են Կայուն զարգացման ազգային խորհրդի շրջանակներում, որը իրենից ներկայացնում է ընդամենը խորհրդատվական մարմին՝ իր մոտ մեկ տասնյակ կառավարամերձ հ/կ-ներով:

Իրականում, «ՌԻՈ+20» ազգային զեկույցի նախագծի մշակման հետ կապված, ՔՀՑ-ին մասնակցելու առաջարկ է եղել բանավոր կերպով եւ քննարկման նախօրեին Կայուն զարգացման ազգային խորհրդի քարտուղար Կարինե Դանիելյանի (ով նաեւ ԿԶԾ ՔՀՑ խորհրդի անդամ է), այլ ոչ թե կառավարության կողմից՝ պաշտոնապես: Բնականաբար, ՔՀՑ խորհուրդը մերժել է այդ ոչ պատշաճ մոտեցմամբ առաջարկին:

2012 թ. մարտի 29-ին, նախագծի քննարկումից ընդամենը 7 օր առաջ, էլեկտրոնային նամակով տարածվեց զեկույցի նախագիծը: Նամակում նշված էր, որ ապրիլի 6 -ին նախատեսված է նախագծի քննարկում: Չնայած հատկացված սեղմ ժամկետին եւ ՔՀՑ-ին արված առաջարկի սխալ ձեւաչափին, ԿԶԾ ՔՀՑ-ի որոշ անդամներ ներկայացրեցին որոշ առաջարկներ: Սակայն իրականում դա ոչ թե քննարկում էր, այլ քննարկման իմիտացիա: Այս մասին ԿԶԾ ՔՀՑ ներկայացուցիչները բարձրաձայնեցին ինչպես քննարկման ընթացքում իրենց ելույթների ժամանակ, այնպես էլ՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակին՝ վերջերս ՄԱԿ ներկայացուցիչների հետ ՔՀՑ ակտիվի ունեցած հանդիպման ժամանակ: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն առաջարկեցին վերանայել եւ լրամշակել ներկայացված զեկույցի նախագիծը: ԿԶԾ ՔՀՑ ներկայացուցիչները նաեւ դիմում են ՀՀ կառավարությանն ու դոնոր հանրությանը՝ աջակցելու քաղհասարակության ներկայացուցիչների մասնակցությունը «ՌԻՈ+20» վեհաժողովի աշխատանքներին:

ՍԱՐԳԻՍ ՍԵԴՐԱԿՅԱՆ

ԿԶԾ ՔՀՑ խորհրդի նախագահ

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 3.05.2012

# «Գողատետարանի» պատերից այն կողմ

**Նախկին քաղբանտարկյալ Վարդգես Գասպարին մեկ տարուց ավելի գտնվել է անազատության մեջ: «Առավոտը» ստորեւ ներկայացնում է նրա կալանավայրային դիտարկումներից:**



### «Գողական կառույց»

Կալանավայրերի ադմինիստրացիային կից աշխատում է «գողական կառույց»՝ ադմինիստրատիվ բոլոր հատկանիշներով: Այն կատարում է գործող իշխանության առավել անօրինական եւ հանցավոր գործառույթները: Ավելի կոնկրետ՝ «գողական» համակարգի ակտիվ գործունեությունն ու իշխանությունների անգործությունն առավել ակնհայտ է դառնում կալանավայրում կատարվող հանցագործությունների մասին լռության պահպանումը, իրական փաստերի կոծկումը եւ այլն: Քաղբանտարկյալների մեջ ինտենսիվ քարոզվում է, որ «էստեղ պետք չի ոչինչ անել, դուրս կգնաք՝ կպայքարեք»: Թվում է՝ սա իշխանությունների մշակած ծրագիրն է անհնազանդ քաղաքացիներին իրենց քաջ ծանոթ միջավայրում մշակելու համար: Ըստ ստացված որոշ լուրերի՝ մարտի 1-ի կալանավորների նկատմամբ այլ կալանավորների կողմից նախնական շրջանում եղել է կոշտ եւ բացասական վերաբերմունք: Նրանց ընկալել են որպես ազգի եւ հայրենիքի դավաճաններ: Ըստ որոշ լուրերի՝ մարտի 1-ի որոշ կալանավորներ ժխտում կամ թաքցնում էին իրենց առնչությունը շարժման եւ ընդդիմության հետ, եթե պայմանները շատ անբարենպաստ էին լինում: Սակայն ինչ-որ ժամանակ հետո իրավիճակի փոփոխության հետեւանքով ղեկավարությունը հասկացնել է տվել, որ «նորեկներին» «չնեղեն»: Այդ «հասկացնել տալը» արտահայտվել է տարբեր ձեւերով: Մասնավորապես, ամենօրյա «պրավերկայի» ժամանակ ուղղակի դիմել են տվյալ անձին եւ հարցրել նրա որպիսությունը: Դա արդեն բավարար է, որ կալանավորներն իմանան, որ տվյալ անձին իրավունք չունեն նեղել: Մարտի 1-ի դեպքերից հետո կալանավայրերում զանգվածաբար հայտնվեցին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ովքեր կալանավայրերում առաջին շրջանում բախվեցին գողականության, ավելի ճիշտ՝ իշխանության որոշակի գործակալների հետ: Տեսանելի տարբերություն կար նրանց եւ մնացած կալանավորների կենցաղի եւ ապրելակերպի միջեւ (այլ հետաքրքրությունների շրջանակ, թերթ կարդալու ցանկություն, «Ազատություն» ռադիոկայանի հեռարձակումներին հետեւել եւ այլն): Նախնական շրջանում կալանավայրերում ընդգծված հակակրանքով էին վերաբերվում այդ դեպքերի ժամանակ ձերբակալվածներին՝ ուղղակիորեն կրկնելով «Հայլուրերի» մեղադրանքները: Նրանց էին դիմում «Խեղճ սալդատին ինչի՞ էիք ծեծում», «Ինչի՞ էիք ավտոները վառում», «Խի՞ էիք Օպերան դարձրել աղբանոց» եւ այլ հարցադրումներով: Թեեւ ժամանակի ընթացքում աստիճանաբար նրանց հանդեպ վերաբերմունքը փոխվեց, սակայն քիչ թե շատ շարունակվում էր պահպանվել այն դրվածքը, որ «էստեղ բերդ ա, պետք չի ոչինչ անել, դուրս կգաք, ինչ կուզեք՝ կանեք»: Թվում էր, թե սա իշխանությունների կողմից մշակված ծրագիր էր անհնազանդ քաղաքացիներին իրենց քաջ ծանոթ միջավայրում մշակելու համար:

Բերդ մտնող յուրաքանչյուր կալանավոր հաշվառվում է նաեւ գողական ադմինիստրացիայում:

### Կալանավորների հավաքագրում

Նորեկ, անծանոթ կալանավորին մոտակա խցերից ուղարկվում է ծխախոտ, սուրճ, շաքարավազ, ուտելիք եւ այլն: Կարանտինը կարող է տեւել մինչեւ մեկ շաբաթ: Այս շրջանում նորեկ կալանավորը դեռ հանձնուք չի ստանում եւ կարիք ունի նյութական եւ բարոյական աջակցության, ինչը ստանում է ոչ թե ադմինիստրացիայից, այլ գողատետարանից՝ դրանով իսկ կախման մեջ ընկնելով գողական համակարգից, ինչին չի կարող լավատեղյակ չլինել կալանավայրի ադմինիստրացիան: Հենց այստեղից էլ շրջանառվում է նորեկ կալանավորի մասին ինֆորմացիան, իսկ հիմնական խուց փոխադրվելուց հետո արդեն նրա մասին ճշգրիտ ինֆորմացիան ուղղահայաց եւ հորիզոնական ուղղություններով գնում-հասնում է «գողատետարան»: Ադմինիստրացիային կից աշխատող «գողական» կառույցը նման է ֆաշիստական գաղափարախոսություն ունեցող կուսակցության: Կալանավայր մուտք գործող յուրաքանչյուր ոք (կալանավոր) պարտադիր դառնում է այդ «կուսակցության անդամ»: Ոչ ոք չի համարձակվում հակակրանք արտահայտել: Ամեն մարդ աշխատում է հարմարվել, նույնիսկ դրանում դրական կողմեր տեսնել (օգնում են չունեւորներին եւ այլն): «Կուսակցական անդամավճարը» ամսական 5-10 հազար դրամ է (գումար չունեցողները հատուցում են աշխատանքով): Այն գանձվում է ամեն խցում առանձին:

Յուրաքանչյուր խցի պատասխանատուն՝ «կամեր նայողը», հավաքված գումարի մոտ կեսը փոխանցում է բերդի գողապետին, իսկ մյուս կեսը պահում՝ պետք եղած դեպքերում օգտագործելու համար: Դրվածքն այսպիսին է «Նուբարաշենի» 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ հարկերի համար: 5-րդը՝ ցմահների հարկն ունի առանձին «կուսակցություն»՝ իր գողապետով: Յուրաքանչյուր նորեկի առանձին բացատրվում է «կուսակցության» կանոնադրությունը եւ զգուշացվում է դրանից շեղվելու դեպքում պատժվելու մասին: «Կանոնադրության» առաջնային խնդիրը գաղտնապահությունն է. այս օրենքը խախտողներին սպառնում են պատժել՝ իրենց եւ իրենց ընտանիքի անդամներին: Ամենադաժան խոշտանգման ենթարկվածը սովորաբար չի համարձակվում այդ մասին բարձրաձայնել: Կանոնադրության 2-րդ կետը «կուսակցության» գերակայությունն է: Մասնավորապես՝ ոչ ոք իրավունք չունի ոչ մի հարցով դիմել ադմինիստրացիային, եթե այն նախօրոք չի համաձայնեցրել «կուսակցության» հետ: Հաճախ «կուսակցության» խցերի պատասխանատուները գերազանցում են իրենց լիազորությունները՝ թույլ չտալով կալանավորին օգտվել ամենատարրական իրավունքներից, օրինակ՝ դիմել հանրային պաշտպան խնդրելու համար: Կանոնադրությունը իրականացվում է հոգեբանական ճնշման կիրառմամբ, կենցաղային ամենատարբեր առիթներն օգտագործելով: Կանոնադրությանը չենթարկվող անձանց սաստում եւ քննադատում են խմբակային մեթոդով:

Խցերում, կացարաններում (բարաքներ) ձեւավորվում է հիերարխիա: Գաղութի գլուխն է գողապետը, հաջորդ ամենաբարձր մակարդակում են խաղամոլները (դումարբազները), որոնք տալիս են ամենամեծ եկամուտը հանցավոր իրավահարաբերությունները կարգավորելու գործում: Ամենաբարձր դիրքում գտնվող անձին ծառայում են բոլորը, ամենացածր դիրքում գտնվողին իշխում են բոլորը: Ստորին դիրքի կալանավորները կատարում են «շեֆերի» լվացքը, մաքրությունը եւ այլն: Նրանք կոչվում են «ճուտ»: Ամեն գողական թիմ ունենում է իր շեֆից մինչեւ ծառայողը: Կալանավայրի ծառայողները (աշխատող կալանավորները) համարվում են նվաստ, ոչ հարգված, իսկ գողերը չեն աշխատում, նրանք «մեռելների ոտի տակը չեն մաքրում»: Ամենուրեք քիչ թե շատ հարգում են տարեցներին: Իսկ հիերարխիայում տեղերը բաշխվում են ըստ կատարած հանցագործության, ըստ բերդի կամ գաղութի գողապետի հետ ունեցած հարաբերությունների եւ մատուցած ծառայության: Բերդերում թեեւ խցերը լինում են դասակարգված՝ դատվածներ, չդատվածներ, համենայնդեպս, սպանություն գործածը բարձր դիրքի թեկնածու է համարվում, իսկ մանր գողություն կատարածը՝ ցածր դիրքի: Բերդում կա ինտենսիվ կուսակցական քարոզ. «վերադասները» «ստորադասներին» ըստ էության համոզում են, թե ինչքան հզոր է գողապետությունը:

ՎԱՐԴԳԵՍ ԳԱՍՊԱՐԻ

---

### Ֆոտոցուցահանդես՝ նվիրված մամուլի ազատությանը

Մամուլի ազատության համաշխարհային օրվան նվիրված «Մամուլի ազատություն, տեղեկատվություն ստանալու իրավունք» խորագրով ֆոտոցուցահանդեսի բացման արարողությունը տեղի կունենա մայիսի 3-ին, ժամը 12:00-ին, ՀՀ նկարիչների միությունում (Աբովյան 16, 2-րդ հարկ): Ինֆորմացիայի ազատության կենտրոնից տեղեկացնում են, որ բացման խոսքով հանդես կգան Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթեան, ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը, ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սորոկինը եւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյդոյանը:

### Դի՝ Սեւանա լճում

Արտակարգ իրավիճակների նախարարությունից երեկ տեղեկացրին, որ ահազանգ է ստացվել, թե Սեւանա լճում՝ «Մայամի» լողափի մոտակայքում, հայտնաբերվել է դի: Ջրափրկարարները Սեւանա լճից դուրս են բերել Սեւանի բնակիչ՝ 1930թ. ծնված Հրանտ Գուլոյանի դին եւ հանձնել իրավապահ մարմիններին:

---

# Կոթեցի Յուրայի ազատության խնդիրը քաղաքական հարց դարձավ

Ապրիլի 29-ին Նոյեմբերյանում ՀԱԿ-ի նախընտրական հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Դուք բոլորդ ճանաչում եք կոթեցի Յուրային: Անցած ընտրություններում տեսաք՝ Սերժ Սարգսյանին ընդունեց, տարավ աղուհաց տվեց, հարգեց, պատվեց: Հիմա ի՞նչ ենք մենք տեսնում, հիմա Յուրան որտե՞ղ է՝ քրեակատարողական հիմնարկում, ու նոյեմբերյանցի Յուրայի աշխատած փողը հիմա աշխատում է ղարաբաղցի Ֆլեշը: Էս է, պարզ օրինակ է, թող այն մարդիկ, ովքեր այսօր գնացել են, Հանրապետականի համար իրենց կոտորում են, թող մտածեն: Ժողովուրդ ջան, այ են պուճուր խանութների տերեր, էդ Ֆլեշը, մեկը, մյուսը, թոռնիկները, բանը մեծացել են, պարապ են: Գնո՞ւմ եք քվեարկեք Հանրապետականի օգտին, քվեարկեք, հաջորդ օրվանից վեշերդ մաներից հավաքեք, որովհետեւ թոռնիկները գալիս են, խանութները պիտի աշխատեցնեն»:

«Առավոտը» նախկինում տեղեկացրել է, որ ծագումով Կոթի գյուղից, Պտղավան գյուղի բնակիչ Յուրիկ Հարությունյանը 2008թ. օգոստոսից գտնվում է ազատազրկման վայրում: Նա 8 տարվա ազատազրկման է դատապարտվել մաքսանենգության մեղադրանքով: Յու. Հարությունյանը 1989-94թթ. ակտիվորեն մասնակցել է ազատամարտին, վիրավորվել Կոթիի ինքնապաշտպանական մարտերից մեկի ժամանակ, պարգեւատրվել տարբեր մեդալներով: Հրադադարի հաստատումից հետո նա Նոյեմբերյանի տարածաշրջանի Պտղավան գյուղում զբաղվել է անասնապահությամբ, այգիներ հիմնել, նաեւ բենզին իրացրել: Ստացած շահույթից Նոյեմբերյանի տարածաշրջանում բազմաթիվ բարեգործություններ է կատարել: Աստիճանաբար ընդլայնելով բիզնեսը՝ Հարությունյանը սկսեց զբաղվել Թուրքիայից Հայաստան հագուստի ներկրմամբ:

Նոյեմբերյանում խոսակցություններ են շրջանառվում, որ նրա այդ բիզնեսը խանգարում էր նույն գործով զբաղվող Հայաստանի ազդեցիկ որոշ մարդկանց, ինչն էլ նրան ազատազրկելու հիմնական պատճառը դարձավ:

Նշենք, որ 2007 թվականին Յուրիկ Հարությունյանի նախաձեռնությամբ Կոթի գյուղում կայացավ մատաղի արարողություն, որի ժամանակ 7 ցուլ մորթվեց, բացօթյա ճաշկերույթ կազմակերպվեց, համայնքի ավագանու որոշմամբ Սերժ Սարգսյանին շնորհվեց համայնքի պատվավոր քաղաքացու կոչում:

Նոյեմբերյանի եւ Իջեւանի տարածաշրջանների 33 համայնքների ղեկավարները, Երկրապահ կամավորականների միության Տավուշի մարզային խորհուրդը Յուրիկ Հարությունյանին ազատություն շնորհելու խնդրանքով դիմել են Սերժ Սարգսյանին, սակայն՝ ապարդյուն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Րաֆֆիենց գերդաստանն է եղել իմ առաջին ծափահարողը»

## Կամ՝ Ձախ Հարութի այցի, «սարի քյալլի եկեղեցիների» ու երգչի դաշնակցական չդառնալու մասին

Ամերիկահայ երգիչ Հարութ Փամբուխչյանը (Ձախ Հարութ) Երեւանում է: Ասում է՝ Հայաստան է եկել «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանի հրավերով, չնայած զբաղվածությանը՝ չի մերժել. «Ես նրանց գերդաստանի երգիչն եմ, ուրախությունների ու տխրությունների վկան, իսկ Րաֆֆիի հետ համարյա տարեկիցներ ենք: Ամերիկայում էդ ընտանիքն է եղել իմ առաջին ծափահարողը: Իսկ ինչ վերաբերում է քաղաքականությանը, այն իմ արյունն ու խառնվածքը չէ, քարոզարշավին էլ երգել եմ, բայց բեմից չե՛մ ասել՝ ժողովուրդ, Րաֆֆիին ընտրեք, որովհետեւ դա իմ գործը չի, ժողովրդի գործն է…»: Երգիչը նեղվում է, երբ ամեն ինչի մեջ այլ ենթատեքստ են փնտրում, պրովոկացիոն հարցերով իրենից փորձում ինչ-որ բաներ կորզել. «Ասում են՝ ինչքա՞ն դրամ են քեզ տվել, որ երգես: Հո ամեն ինչ դրամի մեջ չէ՞, էդ ընտանիքը ազնվության մարմնացում է, ես էլ իրենց շատ հարգում եմ: Ի դեպ, երբ 25 տարեկանում Ամերիկա եկա, 1,5 տարի ձրի երգեցի բոլոր կուսակցությունների, հայրենակցական միությունների ու ազգային կառույցների համար: Հայկական դպրոցներ կան, որոնց շաղախի մեջ իմ քրտինքը կա, ինչ ձեռնարկ եղել է, դրամահավաքի համար երգել եմ»:

Խոսելով իր երգերի երկարակեցությունից՝ Հարութ Փամբուխչյանը նշում է, որ

երգը պիտի մտածել տա մարդուն. «Թե չէ՝ հիմա երգեր կան, որոնց կարելի է սեզոնային համարել՝ էստեղ լսում ես, էնտեղ մոռանում: Հարատեւելու ուժը չկա, երգը մարդու մոտ պետք է հիշողություններ արթնացնի: Ինչպես, օրինակ, «Տարիներս անցան»-ը … Մարդիկ կան՝ երգեր են երգում, ընկել են ինչ-որ սպեցիֆիկ բիթի հետեւից, բառերն էլ ոչինչ չեն ասում, ցավալի է»:

Երգիչը 1975-ին է հեռացել Հայաստանից: Խնդրեցինք զուգահեռներ տանել իր ժամանակի եւ



այսօրվա Երեւանի միջեւ:

«Ես սիրում եմ Երեւանը, իմ քաղաքն է, էստեղ եմ ծնվել, կրթություն ստացել ու մարդացել…էն ժամանակ կոմունիստական սիստեմ էր, բայց մուրացկաններ չկային: Հիմա մարդիկ աղբարկղերն են խառնում: Օրերս 90 տարեկան մի կին տեսա, ախր ինչո՞ւ պետք է նա փողոցի անկյունում կոտեմ ու մաղադանոս վաճառի: Ասացի՝ մայրիկ ջան, ինչի՞ ես նստել…Ինչ կար-չկար դիմացը վերցրի, վճարեցի, խնդրեցի տուն գնա: Պտտվեցի, հետ եկա, տեսա նորից դրել-վաճառում է կանաչին: Լավ բաներ եմ տեսնում՝ ուրախանում եմ, վատից էլ տխրում եմ: Ափսոսում եմ, որ ծայրահեղ աղքատներ ու ծայրահեղ հարուստներ կան Հայաստանում, որոնք աշխատատեղեր բացելու փոխարեն սարի քյալլին եկեղեցի են սարքում: Ընկերներ ունեմ, որ եկան էստեղ դրամներ ներդրեցին ու հետ չեկան Լոս Անջելես՝ սպանվեցին: Սփյուռքը վախենում է, թե չէ՝ ֆինանսական կարողություն ունեցողներ կան, որ կուզենան ներդրումներ անել հայրենիքում»,- ասում է զրուցակիցս: Նաեւ հավելում է, որ չի ափսոսում ԱՄՆ գնալու համար՝ բոլոր ակնկալիքներն արդարացվել են, նշում է, որ եթե նկարեր ու քանդակեր (մասնագիտությամբ նկարիչ- քանդակագործ է), կյանքը լրիվ այլ ընթացք կունենար. «Էդ ասպարեզում երեւի պիտի մեռնեսգնաս, որ գործերդ սկսեն գնահատել: Բայց ես երգեցի 1-2 տեղ, ու բուռն արձագանքներ եղան: Երբ իմ առաջին ձայնապնակը եղավ՝ Արթուր Մեսչյանի «Ուր էիր Աստված» երգով, այն ասես ռումբի պես պայթեց, ու կոնտրակտները թափվեցին գլխիս, նույնիսկ ամերիկյան հեռուստատեսությունը սկսեց հետաքրքրվել ինձանով»:

Հարութը սիրով է հիշում 89-ի համերգները երեւանյան ստադիոնում. «Ստադիոնի խելագարությունները իմ կյանքի ամենաերջանիկ օրերն են եղել»: Կյանքի լիբանանյան դրվագներն էլ չի մոռանում. «Երբ գնացի Լիբանան, պատերազմ սկսվեց, 6 ամիս մնացի ներքնահարկում, ռումբեր էին պայթում, մորուքս երկարել էր… Գնացի դաշնակցության ակումբ, հայ զինյալ տղերք կային, որ Բուրջ Համուտ հայկական թաղամասն էին պահում: Ակումբում հայտնեցի, թե զենքի հետ ծանոթ եմ, բանակ եմ գնացել, կարող եմ օգնել, դաշնակցության պարագլուխ Խաչիկ Արաբյանը, սակայն, ասաց՝ տղաս, դու պետք չունես զենք բռնելու, միայն երգելդ էլ բավական է, բայց ես եւ զենք էի բռնում, եւ կիթառ էլ: Ինձ ասացին՝ Հարութ, դու մեր տղեն ես, արի ընդունվի մեր շարքերը: Չուզեցի: Ասացի՝ հավատում եմ Ձեր արած գործին, դաշնակցությունը մեծ ներդրում ունի հայապահպանության առումով, եւ բնավ պարտադիր չէ կուսակցական լինելս: Մանավանդ, երբ իմ կարիքը զգացվի, էլի ձեր տղեն եմ: Ի դեպ, երկրորդ անգամ ինձ հենց դաշնակցությունը Հայաստան բերեց. համալիրում 6 համերգ տվեցի, որպեսզի հասույթը գնա Ղարաբաղ: Հիմա էստեղ խոսակցություններ են գնում, թե ինչու եմ եկել «Ժառանգության» համար: Մի հետաքրքիր բան ասեմ՝ էստեղի դաշնակցությունն ուրիշ դաշնակցություն է, էնտեղինը՝ լրիվ այլ»:

Մեր զրույցի ընթացքում երգիչը նաեւ անդրադարձավ Հայաստանում շնորհվող պետական պարգեւներին. «4 ամիս առաջ Կիլիկյան թեմի առաջնորդ Արամ Առաջին կաթողիկոսը ինձ պարգեւատրեց «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, ես գիտեմ, որ էդ շքանշանը Հայաստանում բաժանում են չամիչի նման: Բայց Հայաստանից դուրս լրիվ այլ է: Էդ մեդալը ստանալուց հետո համերգներ ունեցա Սփյուռքի մեջ ու նկատեցի, որ ժողովրդի դրական վերաբերմունքը իմ հանդեպ կրկնապատկվել է, որովհետեւ իրենք գիտեն, թե ինչ է նշանակում Արամ Առաջինի ձեռքով շնորհված մեդալը»:

Գալով սիրված երգերի թեմային, Ձախ Հարութին խնդրեցինք առանձնացնել իր համար հոգեհարազատ գործերը: Նա ասաց, որ դրանց մեջ են ժողովրդական ստեղծագործությունները, որոնք հիմնականում մորից է լսել, եւ Ռուբեն Հախվերդյանի երգերը:

Նա նաեւ մի հետաքրքիր դրվագ պատմեց այս առիթով. «Մի անգամ Լոս Անջելեսում մեկն եկավ ու ասաց՝ Հարութ, ես քեզ 17000 դոլար եմ պարտք: Զարմացա՝ ախր իրեն փող չէի տվել: Ասաց՝ 17 անգամ լսել եմ «Երեւանի գիշերներում» երգը համերգներին ու ամեն անգամ լսելով՝ ձրի գնացել Երեւան-հետ եկել»:

Ինչ վերաբերում է Երեւանում մեծ համերգ կազմակերպելուն, ինչ-ինչ բանակցություններ տարվում են, Հարութը կգա, եթե իրեն ու ընդհանրապես սփյուռքյան երգիչներին Հայաստանից այնպես հրավիրեն, ինչպես հայաստանցի երգիչներին են, օրինակ, ԱՄՆ հրավիրում. «Ամեն տարի էնտեղից Թաթային, Արմենին ու մնացածին հրավիրում են, իսկ էստեղից ինձ 10 տարի է՝ հրավեր չկա: Ուրախ եմ, որ տղաները գալիս էնտեղ լավ վարձատրվում-հետ են վերադառնում: Իրենք (Հայաստան կողմը) էլ եթե ուզեն, կարող են նույն կերպ վարձատրել մեզ: Բայց հարցն էստեղ գումարը չէ, ամիս է եղել՝ 16-17 հարսանիք եմ երգել, տեղ կա երգել եմ ու մեծ գումար պահանջել, բայց էն գաղութներին, որ հարուստ չեն, միշտ հարմարվել եմ»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

### ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

## Փաստաթղթերի ընդունումը՝ մայիսի 5-ից

Մայիսի 5-ից պետական եւ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում սկսվում է դիմորդների փաստաթղթերի ընդունման եւ հայտագրման գործընթացը, իսկ մինչ այդ՝ մայիսի 4-ին Գնահատման եւ թեստավորման կենտրոնում տեղի կունենա ԳԹԿ-ի ներկայացուցիչների եւ ՀՀ պետական եւ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում ձեւավորված ընդունող հանձնաժողովների պատասխանատու քարտուղարների հանդիպումը: Հանդիպման ընթացքում կքննարկվի 2012թ. բուհում դիմորդների փաստաթղթերի ընդունման եւ հայտագրման գործընթացը:

Տեղեկացնենք, որ դիմորդների փաստաթղթերի ընդունումը եւ մասնագիտությունների հայտագրումը իրականացվելու է մայիսի 5-ից մինչեւ հունիսի 1-ի ժամը 18-ն ընկած ժամանակահատվածում: Դիմորդը կարող է հայտագրել ՀՀ մեկ կամ մի քանի պետական եւ մասնավոր բուհերի՝ մինչեւ երկու անվճար եւ ութ վճարովի մասնագիտությունները:

Սեփ. լր.

# Իտալացի դիրիժորը Վերդի կամ Պուչինի կղեկավարի

## Եթե Երեւանը հրավիրի

Հայտնի օպերային թատրոնների պահանջված հյուր, իտալացի դիրիժոր Ալդո Սիսիլլոն «Արամ Խաչատրյան» համերգասրահում մայիսի 4-ին կղեկավարի Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը: Կկատարվեն Մենդելսոնի Շոտլանդական սիմֆոնիան եւ Բրամսի Դաշնամուրի առաջին կոնցերտը: Մենակատարն է անվանի դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանը:

«Առավոտի» հետ զրույցում օպերային ճանաչված դիրիժորը հայտնեց, որ չի մերժում արտերկրյա հրավերները՝ ղեկավարելու նաեւ սիմֆոնիկ ու կամերային նվագախմբեր: Դիրիժորը ասվածը ներկայացրեց՝ հայտնելով. «Մեր ժամանակակից կոմպոզիտորներից շատերը այսօր էլ քիչ են ստեղծագործում սիմֆոնիկ կամ կամերային գործեր՝ հավատարիմ մնալով իտալական օպերային արվեստի ժանրին: Պետք է խոստովանեմ, որ ստեղծված սիմֆոնիկ եւ կամերային երկերն էլ առանձնապես բարձրարվեստ չեն: Կարճ ասած՝ Իտալիան աղքատ է այդ ժանրերում»: Ֆիլհարմոնիկի հետ առաջին փորձից հետո դիրիժորը զուգահեռներ անցկացրեց Հայաստանի ֆիլհարմոնիկի եւ Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Բուդապեշտի եւ այլ քաղաքների իր ղեկավարած նվագախմբերի հետ, նշելով. «Երեւում է, որ շուրջ ութ տասնամյա ավանդույթ ունեցող հայկական



Իտալացի դիրիժորը՝ Սվետլանա Նավասարդյանի հետ:

նվագախմբի ներկայիս երաժիշտները իրենց նախորդների գործի իսկապես արժանի շարունակողն են, իսկ դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանը, որի հետ առաջին անգամ եմ համագործակցում, պարզապես ուժեղ երաժիշտ է՝ նաեւ հումորով ու կյանքով լի անձնավորություն»:

Հետաքրքրությանը, թե ինչո՞ւ հատկապես ինքն է ղեկավարում Պավարոտիի մահվան առաջին տարելիցից (2008թ.) մինչեւ հիմա նրա պատվին կատարվող ռեքվիեմները, Ալդո Սիսիլլոն պատասխանեց. «Պավարոտիի հետ առաջին անգամ բեմ եմ բարձրացել 2000թ.՝ երգչի 40-ամյա բեմական գործունեությանը նվիրված հանդիսության ժամանակ: Դրանից հետո մենք դարձանք անբաժան ընկերներ: Նույնիսկ երբ նա առաջին անգամ լսում էր որեւէ երգչի, անպայման ինձ հրավիրում էր ու լսում կարծիքս: Սա, անկասկած, ինձ համար մեծ պատիվ էր… Ամեն տարի սեպտեմբերի 6-ին՝ նա մահվան օրը, ողջ Իտալիայում հնչում է ռեքվիեմ ու, վստահ եմ, որ այդ օրը մեզ միանում է աշխարհը»:

Զրույցի ընթացքում դիրիժորը խոստովանեց, որ շատ քիչ գիտի հայկական մշակույթը՝ ի տարբերություն հայոց պատմության, ասելով, թե մտերիմ է գրող, արմատներով հայ Անտոնիա Արսլանի հետ, որի՝ հայկական թեմաներով վերջին շրջանում լույս տեսած երկու պատմական նովելները մեծ հետաքրքրություն են առաջացրել Իտալիայում: Իսկ թե հրավերի դեպքում կհամաձայնի՞ Երեւանի օպերային թատրոնում ղեկավարել խաղացանկային որեւէ ներկայացում, Ալդո Սիսիլլոն նշելով, որ ինքը նախընտրում է ղեկավարել իտալացի կոմպոզիտորների օպերաներ, տվեց Վերդիի եւ Պուչինիի անունը:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 3.05.2012

# ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Հաղթողները պարգեւատրվեցին

«Վիվասել-ՄՏՍ»-ը տեղեկացնում է, որ ապրիլի 27-ից 29-ը Ծաղկաձորում կայացավ gt hackathon Armenia 2012 մրցույթի եզրափակիչ փուլը:

Երեկ «Մեդիամաքսի» գրասենյակում տեղի ունեցավ հաղթողների պարգեւատրումը: «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը Android անվանակարգում հաղթող թիմի ղեկավարին հանձնեց Samsung Galaxy Nexus սմարթֆոն, իսկ Chrome App անվանակարգում հաղթող թիմի ղեկավարին՝ HTC Flyer պլանշետային համակարգիչ: gt hackathon Armenia 2012-ի կազմակերպիչներն են Google Developer Group of Armenia եւ Հայկական սոցիալական մեդիա ասոցիացիան: Հաքաթոնի գլխավոր հովանավորն էր «Վիվասել-ՄՏՍ»-ը, պաշտոնական գործընկերը՝ «Մեդիամաքս» մեդիա ընկերությունը: gt hackathon Armenia 2012 եզրափակիչ փուլին մասնակցելու համար ընտրվել էր 15 նախագիծ: Ապրիլի 29-ին, երկօրյա եզրափակիչ աշխատանքից հետո, թիմերը ներկայացրեցին իրենց նախագծերը, որից հետո ժյուրին գնահատեց դրանք ու հայտարարեց հաղթողներին:




Մրցույթի նպատակն էր ստեղծել ծրագրեր, որոնք աշխատում են Android օպերացիոն համակարգի վրա եւ հավելումներ (extensions/apps) Google Chrome բրաուզերի համար: Android անվանակարգում հաղթող ճանաչվեց Event Guide նախագիծը (թիմի ղեկավար՝ Մինաս Քեշիշյան): Event Guide-ը իրենից ներկայացնում է միջոցառումների կենտրոնացված համակարգի Android հավելված, որը թույլ է տալիս համակարգից օգտվողներին արագանց տեղեկանալ Հայաստանում սպասվող մշակութային, սպորտային եւ ժամանցային իրադարձությունների մասին, կատարել նշումներ օրացույցում, գնահատել եւ առանձնացնել նախընտրելի միջոցառումները: Այն թույլ է տալիս գտնել մոտակայքում տեղի ունեցող իրադարձություններ կամ կատարել ընդլայնված որոնում, ինչպես նաեւ դրանց մասին սոցիալական ցանցերով տեղեկացնել ընկերներին: Օգտվողները կկարողանան հավելվածի օգնությամբ հեշտորեն ձեռք բերել էլեկտրոնային QR տոմսեր՝ շարժական վճարումների համակարգով: Chrome App անվանակարգում հաղթող ճանաչվեց Me Chat նախագիծը (թիմի ղեկավար՝ Կարեն Ղանդիլյան): Նախագիծը իրենից ներկայացնում է սոցկայքերի, մասնավորապես, Google+-ի, Facebook-ի չաթերի կենտրոնացման համար նախատեսված հավելում: Բրաուզերի պատուհանում բացվում է փոքրիկ դաշտ, որի մեջ հնարավոր կլինի տեսնել սոցկայքերում տվյալ պահին առցանց գտնվող ընկերներին: Բացի դրանից, Me Chat-ն առաջարկում է թարգմանության հնարավորություն, որն աշխատում է Google Translate համակարգի միջոցով: Օգտատերը կարող է, օրինակ, Facebook-ի չաթում գրել հայերեն հաղորդագրություն, որը խոսակցին ուղարկվելուց առաջ կթարգմանվի նրա համար նախընտրելի լեզվով՝ ցանկության դեպքում կուղարկվի նաեւ օրիգինալ տարբերակը: Համապատասխան կերպով պատասխանն ավտոմատ կթարգմանվի կարգավորումներում նշված լեզվով:

«Վիվասել-ՄՏՍ»-ը աջակցում է Google Developer Group of Armenia-ին եւ Hakathon 2012-ին, քանի որ հավատում է, որ նման նորարարական նախագծերը եւ միջոցառումները իսկական ներազդեցություն ունեն երկրի ՏՏ ոլորտի առաջխաղացման հարցում: Hakathon-ի մասնակիցները հանդես են եկել բջջային մի շարք նորարարական ծրագրերի նախաձեռնություններով եւ սա, անկասկած, Հայաստանում ծրագրերի զարգացման ոլորտի համար ամենահզոր խթանն է: Սա նաեւ ստիպում է մեզ հավատալ մեր ժողովրդի հնարավորություններին»,- ասաց «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը: Android եւ Chrome App անվանակարգերում երրորդական նախագծեր ստացան խրախուսական մրցանակներ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

## Ըստ Կարեն Քոչարյանի՝ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն եւ ՕԵԿ-ը փող կբաժանեն




Երեկ SPRING PR ընկերության նախագահ Նվարդ Մելքոնյանն ու քաղաքական տեխնոլոգիաների մասնագետ Կարեն Քոչարյանը խոսեցին Հայաստանում նախընտրական քարոզչության ընթացքում կիրառված տեխնոլոգիաների արդյունավետությունից: Մելքոնյանի ձեւակերպմամբ, ընդհանուր առմամբ, PR արշավը միապաղաղ էր, ո՛չ հետեւողական, պասիվ տպավորություն էր թողնում. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին օրերն են, թվում էր, թե այնքան թեժացած ու շիկացած պետք է լիներ նախընտրական պայքարի մթնոլորտը, որ բոլորս ընտրություններով շնչեինք: Մինչդեռ բնակչության մեծ մասը չի էլ հասկացել, թե ով ինչ է ուզում ասել»:

Քոչարյանը համարում է, որ քարոզարշավի ընթացքում ամենալավ քայլերից մեկը Նիկոլ Փաշինյանի «30 վայրկյանն» էր, սակայն, ըստ նրա՝ ՀԱԿ-ը շատ պասիվ էր, այնքան, որ ստացվեց հետեւյալը. «Նիկոլը ասաց, հետո Նիկոլը նորից ասաց ու մենակ Նիկոլը ասաց, եւ նրան ոչ մեկը չփորձեց օգնել: Իսկ ընդհանուր առմամբ՝ թիմերի մեջ էլ նույն պասիվությունն էր, բայց ահա 2 օրից՝ լռության օրը՝ լուռ կբաժանվեն փողերը»:

Պատասխանելով «Առավոտի» հարցին, թե ինչ պետք է անեին ուժերը. մինչ «լռության օրը» փողը նախօրոք բաժանեի՞ն, թե՞ խոստումները շատ տրվեին, Քոչարյանն ասաց. «Ծփումները պետք է շատ լինեին, ճիշտ է, բոլորն էլ հանդիպում էին մարդկանց հետ, որոշ բաներ ցույց տալիս, բայց տեխնոլոգիաները փոխվել են, մարդիկ հոգնել են այդ տեսարաններից: Ուժերը չօգտագործեցին այն արդի տեխնոլոգիաները, որը կիրառվում է աշխարհում, մեր ուժերը մնացին 60-70-ականների տեխնոլոգիաների հույսին»: Մեր դիտարկմանն էլ՝ «լռության օրը» հատկապես ո՞ր ուժերը կակտիվանան ու կփորձեն «լուռ փողեր» բաժանել՝ Քոչարյանը պատասխանեց՝ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն եւ ՕԵԿ-ը:

Մելքոնյանի կարծիքով, ոչ մի քաղաքական ուժ գրագետ PR կոնցեպցիա չէր մշակել: Վերցված էր մի ընդհանուր բանաձեւ, որը ներկայացվում էր Փարիզից մինչեւ Արամուս ու ցանկացած բնակավայրում նույն բանն էր խոսվում:

Քոչարյանի փոխանցմամբ՝ անգամ ՀՀԿ-ի մեքենաների վրայի դրոշներն էին կրկնվում, իսկ ծրագրերի առումով՝ բոլորի մոտ բառակույտ էր՝ «թութակային վիճակ, ինչքա՞ն կարելի է 30 օր նույն բանը կրկնել»:

Բանախոսները շեշտում են՝ ընտրարշավը չկողմնորոշված էլեկտորատին կողմնորոշելու համար է, իսկ չկողմնորոշվածները Հայաստանում շատ են, ու եթե այսօր սոցհարցում անցկացվի՝ չկողմնորոշվածները կկազմեն ընտրողների 1/3-ը:

Քոչարյանը մեկնաբանելով նախագահի այցը Մաշտոցի պուրակ՝ ասաց, որ դա PR քայլ էր՝ շեղելու հասարակության ակտիվ մասսայի ուշադրությունը: Մելքոնյանն էլ նախագահի այդ քայլը անտաղանդ բեմադրություն որակեց:

Ամփոփելով ուժերի քարոզարշավը՝ Քոչարյանը նշեց. «Օրինակ՝ «Ժառանգությունը» հետաքրքիր սկսեց,ապա պակասեցրեց, հետո վերակենդանացրեց Րաֆֆի Հովհաննիսյանի ձեռքսեղմումները. սինուսոիդ էր: ՀՀԿ-ը՝ գնաց այնպես, ինչպես որ պետք է գնար, նույնը ԲՀԿ-ի դեպքում է՝ «copy-paste»: ՀԱԿ-ը շատ անհասկանալի էր, այնտեղ ռեալ միակ աշխատող մարդը Նիկոլ Փաշինյանն էր, մի քիչ էլ՝ Հրանտ Բագրատյանը: Թեեւ ՀՅԴ-ն հերքում էր, բայց ներքին խնդիրներ ունեն: «Ազատություն, արդարություն, դաշնակցություն» կարգախոսն էլ վերածվեց «ազատություն, արդարություն, ներողություն, դաշնակցություն»-ի: Ինչ վերաբերում է ՕԵԿ-ին՝ նրանց չեմ մեկնաբանի»:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ՝ ֆինանսական համակարգում մրցակցության կարգավորման հարցերով աշխատանքների իրականացման համար մասնագետներ (որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով) հավաքագրելու նպատակով:

Աշխատանքի նպատակն է ՀՀ ֆինանսական համակարգում հակամրցակցային համաձայնությունների, գերիշխող դիրքի բացահայտումը, համակենտրոնացման խնդրի կարգավորումը:

Իրականացվելիք հիմնական գործառույթներն են

Ֆինանսական ծառայությունների ոլորտում հակամրցակցային դրսեւորումների բացահայտման նպատակով ֆինանսական շուկաների եւ կնքվող գործարքների վերլուծություն:

Ֆինանսական համակարգում հակամրցակցային դրսեւորումների կարգավորմանն առնչվող ուղեցույցների, տիպոլոգիաների մշակում:

Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը

Բարձրագույն տնտեսագիտական կրթություն

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ միկրոտնտեսագիտություն (խորացված), մրցակցության օրենսդրություն (խորացված), ֆինանսական համակարգի մասնակիցների կողմից իրականացվող իրավական գործունեություն եւ գործառնություններ (միջանկյալ), ֆինանսական համակարգի մասնակիցների օրենսդրություն եւ նորմատիվային դաշտ (միջանկյալ), ֆինանսական վերլուծություն (միջանկյալ):

Լեզուների իմացություն՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների իմացություն (ռուսերեն եւ անգլերեն լեզուները՝ տարբեր փաստաթղթերի հետ աշխատելու, մասնագիտական գրականություն ընթերցելու նպատակով):

Անհրաժեշտ հմտություններ՝ համակարգչով աշխատելու հմտություն (MS Office), տվյալների բազաների կառավարման համակարգերի հետ աշխատելու հմտություն:

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ 2012թ մայիսի 16 ը ներառյալ:

Պահանջվող փաստաթղթերը

Դիմումի ձեւ (Ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում-www cba am «Թափուր աշխատատեղեր» բաժնում կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում):

Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www cba am) կամ տրվում է Կենտրոնական բանկում: Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 59-26-34 եւ 26-13 (ներքին):

Հասարակայնության հետ կապերի ծառայություն